ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ АРАКС

N 108

ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս համայնք,
Հասցե՝Դրոյի 2,հեռ.՝ (077)09-08-07,էլ.փոստ՝ araqsvagharshapat.armavir@mta.gov.am

«12» հուլիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ
պարոն Ա.Ղահրամանյանին

Կից Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2016 թվականի հուլիսի 12-ին կայացած ժողովի հաշվետվությունը 2016 թվականի 1-ին կիսամյակում ծավալած գործունեության վերաբերյալ:

Արաքս համայնքի
ղեկավար / / Ա.Միքաելյան

Կատարող՝Ա.Մարկոսյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Արաքս /Էջմ./ համայնքի ղեկավարի 2016թվականի 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հարգելի համայնքի բնակիչներ և պարոն Ա. Այվազյան, թույլ տվեք Ձեր ուշադրությանը ներկայացնել Արաքս համայնքի ղեկավարի, ավագանու և գյուղապետարանի աշխատակազմի 2016թ. հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների և միջոցառումների ամփոփիչ տեղեկատվությունը:

Արաքսի գյուղապետարանը իր գործունեությունը իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համաձայն: Մեր համայնքը ունի 530 տնտեսություն, բնակչությունը՝ 2052 մարդ, մոտ 1302 ընտրող, 1290հա հողատարածություն, որից ոռոգվող 682հա հողատարածք: 2015 թվականին մշակվել է շուրջ 207.6 հա հողատարածք, անցյալ տարվա համեմատությամբ 5 հա ավել: Գյուղում մշակվում են գյուղատնտեսական տարբեր կուլտուրաներ:

Ըստ բնագավառների կատարվել են

Ֆինանսական բնագավառում

Կազմակերպվել է և շարունակվում է հողի հարկի և գույքահարկի հավաքագրման աշխատանքները: Նախատեսված 9269.0 հազար դրամի փոխարեն հավաքագրվել է 2966.9հազար դրամ սեփական եկամուտ, այսինքն ապահովել ենք եկամուտների հավաքագրման 32 տոկոս կատարողական:
Գյուղապետարանը աշխատավարձի և եկամտային հարկի պարտքեր չունի:
Համայնքի հաշվեհամարին կուտակվել է 7157.5հազար դրամ գումար, որը նախատեսված է ծախսել համայնքի հիմնախնդիրների լուծման վրա:

Արաքսի գյուղապետարանում և Արաքս համայնքի հետ տարված աշխատանքների բնագավառում

Արաքս համայնքի Գյուղապետարանի,<<Բուժ. Ամբուլատորիայի>> սենյակների և Արաքս համայնքի Հանդիսությունների սրահի վերանորոգման աշխատանքներ կատարելու նպատակով համայնքի բյուջեից տրամադրվել է շուրջ 4192.1 հազար ՀՀ դրամ:

Պաշտպանության բնագավառում

Կազմակերպվել է զինապարտների հաշվառման, նրանց բուժզննման աշխատանքները: Ուժեղացվել է կապը զինկոմի հետ և կազմակերպվել է զորահավաքի աշխատանքներ:

Հաճախակի կազմակերպվում են հանդիպումներ համայնքի բնակիչների և սահմանապահ ուղեկալների հրամանատարության միջև:

Սոցիալական ծառայության բնագավառում

Աջակցություն է ցուցաբերվել անապահով ընտանիքներին: Թվով 20 անապահով ընտանիքների տրվել են դրամական օգնություն ընդամենը՝ 1950.0 հազար ՀՀ դրամի: 2016թվականին համայնքի թվով 14 մահացածների համար գնվել է ծաղկեպսակներ՝ ընդամենը 260.0 հազար ՀՀ դրամի: Հայոց բանակի օրվա՝ հունվարի 28-ի, հայրենիքի պաշտպանի օրվա՝ փետրվարի 23-ի և կանանց միջազգային օրվա, մարտի 8-ի կապակցությամբ կազմակերպվել է միջոցառումներ և գնվել է նվերներ, ընդհանուր գումարով 930.4 ՀՀ դրամի:

Գյուղատնտեսության բնագավառում

Կազմակերպվել են աշնանացանի և ոռոգման աշխատանքներ:
Կատարվել է միջհամայնքային ջրագծերի վերանորոգման աշխատանքներ, որի համար համայնքի բյուջեից տրամադրվել է շուրջ 670.0հազար ՀՀ դրամ:

Շրջակա միջավայրի պաշտպանություն

Համայնքի բյուջեի հաշվին կատարվել է աղբահանություն՝ շուրջ 120.0հա բնակավայրի տարածքից, որի համար համայնքի բյուջեից ծախսվել է 516.0հազար դրամ գումար:

Համայնքի հիմնախնդիրներ

Համայնքի հիմնախնդիրները այսօր էլ մնում են՝

1. Համայնքի գազաֆիկացումը,
2. Ոռոգման ջրի անբավարարությունը,
3. Մանկապարտեզի շենքի հիմնանորոգումը,
4. Դպրոցի և մշակույթի տան վերանորոգումը:

Արաքս համայնքի ղեկավար՝/ /Ա. Միքանյան